ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԲՀԱԾՁԲ-17/23

ք. Երևան «12» 04 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և <<Զանգակ-97>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ս. Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել դասագրքերի տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և ոչակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N 1 և N 2 հավելվածներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 247738720 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պայմանագրի գնից 100000000 /մեկ հարյուր միլիոն/ ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողին որպես կանխավճար համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի: Պատվիրատուն կանխավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման ավարտից հետո՝ արձանագրության հիման վրա կատարվող վճարումից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005130 ՀՎՀՀ 02512868	<<Զանգակ-97>> ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց փակ. 8 Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան Հ/Հ 217001040013001 ՀՎՀՀ 00830786
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ---------- Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ ---------- Ս. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1

<< 12 >> << 04 >> 2017թ կնքված
ՀՀԿԳՆԲԸԱՀՇՁԲ-17/23 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում դասագրքերի տպագրման ծառայությունները
/այսուհետ՝ Ծառայություն/

Ծառայությունը նախատեսում է ներքոնշյալ դասագրքերի տպագրումը.

1. Անվանումը <<Մաթեմատիկա-1, I մաս>> (1 դաս., դասագիրք-տետր)
/հեղ. Ս. Մկրտչյան/
Չափսը 20x28
Էջերի թիվը 96
Գույնը 4
Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

2. Անվանումը <<Կերպարվեստ 1>> (աշխատանքային տետր 1-ին դասարանի համար)
/հեղ. Լ. Ներսիսյան, Ե. Գյուլմիսարյան/
Չափսը 20x29
Էջերի թիվը 32
Գույնը 4
Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

3. Անվանումը «Մաթեմատիկա-2»
/հեղ. Ս. Մկրտչյան/
Չափսը 17x24
Էջերի թիվը 176
Գույնը 4
Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

4. Անվանումը «Կերպարվեստ-2»
/հեղ. Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան/
Չափսը 17x24
Էջերի թիվը 64
Գույնը 4
Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

5. Անվանումը «Մաթեմատիկա-3»
/հեղ. Ս. Մկրտչյան, Ս. Իսկանդարյան, ../
Չափսը 17x24
Էջերի թիվը 192
Գույնը 4
Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

6. Անվանումը «Երաժշտություն-4»
/հեղ. Յու. Յուզբաշյան, Ա. Փահլեվանյան, ../
Չափսը 17x24
Էջերի թիվը 96
Գույնը 4

Կազմի գույնը 4
Թուղթը օֆ. 1.70 գ/մ2

1-6 կետերի համար

Ելքային տեղեկությունները	-- Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:
Հատուկ նշագրում	-- Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:
Փոխադրումը և բեռնաթափումը	-- Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի:

Պատվիրատու՝

---------- Ն. Հարությունյան

Կատարող՝

---------- Ս. Մկրտչյան

Դասագրքերի բաշխման ցուցակ

<<Զանգակ-97>> ՍՊԸ /2017թ./

Հ/Հ	Մարզը	<<Մաթեմատիկա-1, I մաս>> (1 դաս., դասագիրք-տետր)	<<Կերպարվեստ 1>> (աշխատանքային տետր 1-ին դասարանի համար)	<<Մաթեմատիկա-2>>	<<Կերպարվեստ-2>>	<<Մաթեմատիկա-3>>	<<Երաժշտություն-4>>
1	Արագածոտն	1663	1792	966	1355	1271	1264
2	Արարատ	3349	3758	1349	3179	2274	2704
3	Արմավիր	4132	4132	1912	4132	2532	4132
4	Գեղարքունիք	2964	2961	1717	2507	1948	3020
5	Երևան	12300	12900	8306	9920	9699	10681
6	Լոռի	3221	3305	1169	44	1851	116
7	Կոտայք	3600	3810	2810	3266	2500	2625
8	Շիրակ	2320	3500	1540	3000	1550	2740
9	Սյունիք	1816	1866	1043	1226	1357	1230
10	Վայոց Ձոր	675	695	255	540	365	475
11	Տավուշ	1629	1645	729	1751	1145	1578
12	ԿԳՆ /112 ավագ դպրոց/	894	928	377	584	583	491
	ԸՆԴԱՄԵՆԸ	38563	41292	22173	31504	27075	31056

Պատվիրատու

_____Ն. Հարությունյան

Կատարող

_____Ս. Մկրտչյան

Հավելված 2
«12» «04» 2017թ. կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀՇՁԲ-17/23 գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը, հազ.դրամ	Ենթակա է գնման 2017թ-ի ընթացքում՝ ընդ որում. 3-րդ եռամսյակ /մինչև օգոստոսի 25-ը/		Ընդամենը	
				քանակը	գումարը, հազ.դրամ	քանակը	գումարը, հազ.դրամ
	Դասագրքերի տպագրման ծառայություններ, այդ թվում						
1	<<Մաթեմատիկա-1,I մաս>> (1 դաս., դասագիրք-տետր)	հատ	1.360	38563	52445.680	38563	52445.680
2	<<Կերպարվեստ 1>> (աշխատանքային տետր 1-ին դասարանի համար)	հատ	0.820	41292	33859.440	41292	33859.440
3	<<Մաթեմատիկա-2>>	հատ	1.500	22173	33259.50	22173	33259.50
4	<<Կերպարվեստ-2>>	հատ	1.350	31504	42530.40	31504	42530.40
5	<<Մաթեմատիկա-3>>	հատ	1.500	27075	40612.50	27075	40612.50
6	<<Երաժշտություն-4>>	հատ	1.450	31056	45031.20	31056	45031.20
Ընդամենը							**247738.720**

Պատվիրատու

_____Ն. Հարությունյան

Կատարող

_____Ս. Մկրտչյան

Հավելված 3

«12» «04» 2017թ կնքված

N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/23 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման ՀՀ 2017թվականի պետական բյուջեի՝ «Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում» ծրագրից, ընդ որում՝												Ընդամենը
		1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս /մինչև 10-ը/	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև 25-ը/	
Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ, այդ թվում՝ դասագրքերի տպագրման ծառայություններ	4239				100000,0	100000,0	100000,0	247738,72	247738,72	247738,72	247738,72	247738,72	247738,72	247738,72

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Մկրտչյան